Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ <<Հայրենիքը Ս. Կապուտիկյանի ստեղծագործություններում>>

Կատարող՝ Նունե Վարդանյան
Դպրոց՝<<Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմն.դպրոց>>ՊՈԱԿ
Առարկա՝ գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան №65 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Ներածություն

<<Բանաստեղծները ծնվում են մեծ կյանքի գեղեցկությունները զգալու և նույն այդ կյանքը գեղեցկացնելու համար: Նրանք կոչված են երգելու բնության ներդաշնակությունը, լինելու տիեզերական մի լար, հարստացնելու մարդու հոգին պայծառ մեղեդիներով, նրա առաջ բացելու նոր երազանքների ու գեղեցկությունների հեռուն: Նրանք ծնվում են ոչ թե անեծքի, այլ սիրո խոսքի համար, նրանք մարդկության անսուտ բերաններն են>>:

Հովի. Թումանյան

<<Երկիրը մեծ է ոգու մեծությամբ, իսկ բանաստեղծը բարձունքն է ոգու>>:

Ս. Կապուտիկյան

Հայ պոեզիան ունի դարերի պատմություն և համաշխարհային գրական արժեք: Այն սկիզբ է առել ժողովրդական բանավոր վիպերգերից ու Գողթան երգերից և իր անցած ճանապարհին ստեղծել է բազմաթիվ գրական կոթողներ:

Դրանցում փառաբանվում է հայրենիքի ազատության, անկախության և միասնության գաղափարը, գովերգվում են բնությունն ու աշխատանքը, պատկերվում է մարդկային ապրումների անափ աշխարհը, որը և՛ սեր է, և՛ պանդխտության տխուր ճակատագիր, և՛ սպասումի մեջ նորածին մանկանը մեծացնող օրորոցային:

Մեր բազմադարյա բանաստեղծական արվեստի հարուստ ձեռքբերումների ավանդատերն է 20-րդ դարի պոեզիան: Այդ պոեզիան տենդագին որոնում է բարոյական հենարաններ, փնտրում մահու բերանն ընկած ժողովրդի ներքին գեղեցկությունները, փորձում բացել ժողովրդի դիմադրության վեհությունը, կերտվածքի յուրահատկությունները և ոգու հավերժական գծերը, որոնցով նա բարձր է կանգնումբոլոր տեսակի թշնամիներից: Այդ ժողովուրդը պատմության ճանապարհին ընտրել է արարչագործության,խաղաղ ստեղծման ու աշխատանքի ուղին, անվերջ որոնումների ընթացքում իր մեջ ամբարել է խոր մարդասիրության գծեր, անչար ու անձնազոհ զգացումներ: Կռվելով իր թշնամիների դեմ՝ նա արյուն է տվել ողջ մարդկության համար: Այդ խնդագին զոհաբերումը, կյանքի ստեղծման համար հավերժաբար թափված արյունը, անծայրածիր թախիծը նրան տվել են մի յուրօրինակ զորություն և անպարտելի ոգի:

Այդ ոգու գեղեցկությանն ու անպարտելիությանն են ձոնված Սիլվա Կապուտիկյանի հայրենասիրական ստեղծագործությունները:

Այս շարադրանքի նպատակն էլ սովորողներին այդ ոգով դաստիարակելն է, հայրենիքը, նրա հավերժության խորհրդանշանները ճանաչել ու սիրել տալն է: Այսօրվա սերնդին բանաստեղծուհին ասում է.

Որպեսզի ներկա կառուցեմ,
Ես պիտի հավատամ գալիքին...

Հայրենիքը Սիլվա Կապուկիկյանի ստեղծագործություններում

Վ. Տերյանը 1914թվականին <<Հայ գրականության գալիք օրը>> հոդվածում գրել է. <<Հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջմղիչ ուժը ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է: Սակայն այդ ընդհանուր և իշխող գաղափարն ունեցել է մեզանում իր բնորոշ ու առանձնահատուկ գույնը, որ գրեթե բոլորովին անհասկանալի է օտար մարդուն թե՛ իր էությամբ, թե՛ արտահայտության ձևով:

Հայրենիքի երգը հնչել է առավել կամ պակաս ուժեղ Եղիշեից ու Խորենացուց սկսած մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը դարեր շարունակ, անշուշտ ունեցել է իր կոնկրետ ձևերը՝ որոշ շեղումներով ու տարբեր գույներով,սակայն իր էությամբ միշտ նույնն է մնացել: Մի զորություն է եղել, որը մղել է դեպի հերոսական մարտիրոսություն, դեպի աներևակայելի լարումը հոգեկան ու նյութավոր էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի, ցավատանջ իղձ է դարձել այս անկաշ հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը>>:

Այսօր էլ կարող ենք, մեծ բանաստեղծին կրկնելով, ասել՝ հայրենիքի երգը, Խորենացուց և Եղիշեից միջնադարի վրայով անցնելով, հասել է Աբովյանին, Պատկանյանին, Ռաֆֆուն, Թումանյանին ու Իսահակյանին, Սիամանթոյին ու Վարուժանին, Տերյանին ու Չարենցին և փոխանցվել Շիրազին ու Սահյանին, Սևակին ու Կապուտիկյանին, Վ. Դավթյանին ու Ռ. Դավոյանին, դարձել է

ամբողջությամբ վերցրած ժամանակակից հայ գրականության անբաժանելի հատկանիշը:

Թերևս ուրիշ ոչ մի գրականության մեջ հայրենիքը, նրա ազգային խնդիրը այնքան չի զբաղեցրել գրողներին, որքան հայ գրականության մեջ: Այս հանգամանքը, ազգային ավանդների շարունակություն լինելուց բացի հետևանք է նաև պատմական այն ճակատագրի, որը վիճակվել է մեր ժողովրդին:

Լույսի, արդարության, խաղաղ ուստեղծարար աշխատանքի դարավոր ձգտումն է եղել հայ բանաստեղծների ու մտավորականների, արվեստագետների հայրենասիրական ոգեշնչման ամենաառաջին ակունքը, նրանց ազգային հպարտությունը սնուցող կենսատու ավիշը:

<<Անցյալում,--գրել է Ս. Կապուտիկյանը,--հայ գրողը ականատես էր բռնադատված ժողովրդի տառապանքին թե՛ իր ստեղծագործությամբ, թե՛ առավել ևս՝ իր գործունեությամբ: Իր կոչերով, նամակներով ու դիմումներով շրջել է դռնից դուռ ու երկրից երկիր և աղաղակելով իր կիսամորթ, մայր երկրում արյունաքամվող ժողովրդի մասին՝ ջանացել է շարժել աշխարհի դիվանագետների ու մարդասերների գութը, օգնության կանչել Կարմիր խաչի քույրերին ու դարմանողներին: Հիմա հայ գրողը երջանկություն ունի շրջելու աշխարհից աշխարհ և ավետելու իր ժողովրդի վերածնունդի մասին, ծաղկումի ու կառուցումի մասին>>:

Հայրենիքի երգը Ս. Կապուտիկյանի ստեղծագործության գլխավոր երակն է, ավելի ճիշտ, Կապուտիկյանի պոեզիան երկու գլխավոր երակ ունի՝ սեր և հայրենիք, սիրերգություն և հայրենասիրություն, որոնք, առանձին-առանձին սկիզբ առնելով, իվերջո ձուլվում ու ներդաշնակվում են իրար, <<սերը լայնանում է մինչև հայրենիք, ու հայրենիքը մտերմաբար տեղավորվում է սիրո մեջ>>:
ԵՎ բոլորովին էլ պատահական չէ, որ մի բանաստեղծության մեջ՝ <<Խոհ սիրո մասին>>, բանաստեղծուհին սերը նմանեցնում է հայրենիքին՝ համարելով այն <<հայրենիքի պես միշտ միակ>>, <<հայրենիքի պես միշտ անզուգական>>:

Սիլվա Կապուտիկյանի հենց առաջին բանաստեղծական փորձերը հայրենասիրական ոտանավորներ էին:

<<Օրերի հետ>>, <<Զանգվի ափին>> ժողովածուներում բանաստեղծուհու հայրենասիրական զգացմունքների արտահայտման առիթը Հայրենական պատերազմն էր: Սակայն չի սահմանափակվում Կապուտիկյանի հայրեներգությունը այդ շրջանում: Այդ գրքերում բանաստեղծուհու հայրենի երգի հայտագիրը պարունակում էր բոլոր այն կետերը, լարերը, որոնք հետագայում ավելի խտացան Սիլվա Կապուտիկյանի՝ իբրև քաղաքացու և բանաստեղծի հասունացմանը զուգընթաց, հատկապես 50-ական թվականների կեսերից հետո:

Բանաստեղծուհու հայրեներգության հայտագրի մյուս կետերը վերաբերում են հայրենիքին՝ Հայաստանին, նրա պատմական անցյալին ու ներկային: <<Իմ շռայլ աշխարհ>> /1938թ./, <<Ներբող Հայաստան>> /1945թ/, <<Արարատ>> /1945թ./, <<Հայոց աշխարհ, հայոց երկիր>>/1945թ./, <<Հայաստանից հեռու>> /1946թ./ հայրեներգության գեղեցիկ օրինակներ են:

Հաըրենիքի հատուցած խոհերը միշտ էլ ուժ ու երազանք են տվել հայ գրողներին, եթե նույնիսկ այդ խոհերը վերաբերել են կորցրած հայրենիքին: Իսկ Կապուտիկյանի խոհերն ու մտորումները հիմնականում վերաբերել են գտած հայրենիքին, վերածնված Հայաստանին, որը նաև համայն հայության հայրենասիրական ներշնչանքի ակունքն է.

Դարեր եկան աղետավոր, և ավերի դարերում
Փշրվեցինք աստղերի պես ու ցրվեցինք աշխարհում,
Բայց Արաքսի ափին մնաց փոքրիկ մի հող անառիկ,
Արև մնաց աստղերի մեջ, մնաց հային՝ հայրենիք...
/«Ներբող Հայաստանին»/

Կապուտիկյանի հայրեներգության մեջ Հայրենիք-Հայաստանը ներկայանում էառանձին բեկորներով՝ մայրենի երգի, լեզվի, հայրենական երկնքի, հայրենի լեռների, լճերի պատկերներով: Ահա այդ բեկորներից մեկի հայրենի երգի բանաստեղցական արձագանքը.

Մեր հանճարը՝ հին, մեր երգը՝ անմահ,
Բայց դար ու դարեր հեկեկում էր նա
Մեր լերկ լեռներում, մեր խուլ լեռներում,
Եվ քար աշխարհի ականջից հեռու՝
Գնում էր, թափվում ու կորչում անվերջ
Խոր ձորերի մեջ, մութ ձորերի մեջ...

Բայց՝

Եվ աշխարհով մեկ հնչում է հիմա
Մեր հանճարը հին, մեր երգը անմահ...

Թերևս չկա որևէ ազգային գրականություն, որտեղ չլինեն մայրենի լեզվին նվիրված ձոներ, ներբողներ, որտեղ չփառաբանվի մայրենի լեզուն: Հայ գրողի, բանաստեղծի համար մայրենի լեզուն չի եղել միայն իր մտքերին, խոսքերին կերպ ու ձև տալու միջոց: Նա սրտերում փողոփողող դրոշ է եղել, որին չեն կարողացել խլել «ո՛չ խարդավանքով, ո՛չ անազնիվ սիրով, ո՛չ ահեղ նետով» մի դրոշ, որի գոյությամբ պայմանավորվել է ժողովրդի գոյությունը, այդ պատճառով էլ ժողովուրդը նույնիսկսուրբ հայրենի հողը կորցրել է, բայց լեզվից երբեք չի զրկվել: Մեր դասական ու ժամանակակից գրողները քիչ գործեր չեն գրել, որոնց մեջ փառաբանում են ոչ միայն մայրենի լեզվի գեղեցկությունները, այլև բանաստեղծականացնում են մայրենի լեզուն՝ իբրև մեր իղձերի ու երազանքների թարգմանի, իբրև հայ ժողովրդի գոյատևման խորհրդանշանի: Դրանց մեջ քիչ չեն լավագույնները. այդ լավագույններից մեկն էլ հայ ժողովրդի բոլոր հատվածներում հայտնի դարձած դասական պատվիրանով <<Խոսք իմ որդուն>> բանաստեղծական կտակն է.

Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա քո շուրթերին
Մեր ալեհեր հայոց լեզուն...
ՈՒ տե՛ս, որդի՛ս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:

Սա սովորական, <<շարքային>> բանաստեղծություն չէր, այլ ժողովրդի ոգեկան կյանքի, դարավոր կուտակումների արտահայտությունը, այնպիսի թանձրացում, որը նրան բերելու էր հավերժական գոյություն: Բնավ պատահական չէր Ավ. Իսահակյանի առանձնահատուկ ուշադրությունը Կապուտիկյանի <<կտակի>> հանդեպ: Հայրենիքի պաշտպանության գաղափարը իմաստավորում է ստանում մորից որդուն ավանդվող մայրենի լեզվի փառաբանումով: Այն սփյուռքում դարձավ հայապահպանության կարևոր կռվաններից մեկը:

Այո՛, նվիրական հայրենիքի ու ժողովրդի հարատևության խորհրդանիշ է լեզուն, որովհետև <<երբ գրոհող հրոսակների ճնշումից բերդի պարիսպները ճռռում էին, արդեն և ուր որ է տապալվեին պիտի, նա՝ հայ ժողովուրդը, հոգու խորքերից հանեց իր ապավեն գունդը՝ իր մանրատոկուն գրերը, օղակ-օղակ հագցրեց իրար և որպես պարան երկարելով քարաժայռերն ի վար՝ իջավ շրջապատված բերդից՝ փրկելով իր մնացորդները բնաջնջումից>>: Բանաստեղծուհու համար մայրենի լեզուն, հայրենիքը և ժողովուրդը հոմանիշներ են;

Հայրենիք հայաստանի բեկորներից մեկն էլ Արարատյան դաշտն է համանուն շարքում: Բանաստեղծուհին Արարատյան դաշտի պատկերը ընտրել է վերածնված Հայաստանը բնորոշելու համար.

Դու քար ու ժայռից ամոքված հազիվ,
Ժլատ պարգևդ մեր լեռնաստանում,
Քո մեջ է, որ մեր քրտինքն անբասիր
Առանց վատնումի բարիք է դառնում:

Հայրենի հողի՝ Արարատյան դաշտի խորհրդանիշն այստեղ իմաստավորվում է որպես ժողովրդի կենսագործունեության ակունք:

Արարատյան դաշտը՝ իբրև վերածնված Հայաստանի խորհրդանիշ, բանաստեղծուհուն գրավել է որպես ժողովրդի դարավոր պատմությունն ու ներկան իրենով ամբողջացնող : Եթե միահյուսումը չլիներ, ապա բանաստեղծական որևէ նոր մոտեցում չէր լինի, որովհետև Արարատյան դաշտը Հայաստանի խորհրդանիշ դարձնելու պատմությունը նույնքան հին է, որքան երևի ինքը՝ Հայաստանը:

Դու հին, հնամյա, դու բիբլիական,
ՈՒ նոր Երևան՝ պատանությամբ լի,
Դու ծուխ՝ բարձրացած փողից եղեգան՝
Խառնված ծխին գործարանների:

Այսպես է երևում Կապուտիկյանին Արարատյան դաշտը՝ Հայատանը: ԵՎ սա փաստերի ու երևույթների, ազգային զարդարանքների հիշատակություն չէ չափածո խոսքով: Բանաստեղծուհու գրչի տակ փաստերը կենդանացել ու շունչ են առել, երևույթները կենդանացել ու ոգի են ստացել:

Հինն ու նորը իրար շարունակում են ու լրացնում՝ ստեղծելով հայրենիքի ամբողջական կերպարը:

Դու հին ու նորով բացված աշխարհին,
Դու խոր ու խորունկ փակված իմ երգում,
ՈՒր էլ որ գնամ, իմ ճանապարհին
Քո մի բուռ հողն եմ ոտքիս տակ զգում:

Բանաստեղծուհու համար հինը նույնքան հոգեհարազատ է, որքան նորը, և այդ հին ու նորով միասնացած հայրենիքն է, որ հայրենիք է դարձնում նաև աշխարհը:

Քեզնով աշխարհն է դառնում հայրենիք,
Քեզնով աշխարհում կանգնում եմ հաստատ,
Ի՛մ տուն, ի՛մ որդի, իմ երգերի՛ գիրք,
Դու իմ մա՛յր լեզու, Արարատյա՛ն դաշտ:

Դժվարին ու փորձություններով լի է եղել հայ ժողովրդի պատմական ուղին. հերոսական էջերի կողքին նա ունեցել է նաև ավերումի, կործանման դարեր: Հիշելով անցյալից հերոսականն ու գեղեցիկը՝ բանաստեղծուհին կորով է ներշնչում այսօրվա ապրողներին, նոր կյանք կառուցողներին:

Կապուտիկյանը սրտի կսկիծով է պատմում հայ ժողովրդի ողբերգությունների մասին, ազգային հպարտությամբ լցվում նրա հանճարի փայլատակումների, դժվարին վիճակներից ելք գտնելու, իբրև հավաքական ամբողջություն ապրելու և ստեղծելու կամքի հանդեպ:

Բանաստեղծուհին հպարտ է իր ժողովրդի գտածով ու չկորցրածով. նա շատ թանկ է գնահատում հատկապես հայ ժողովրդի 1920թվականից սկսվող նոր վերածնունդը, որի խորհուրդն իսկ բավական է, որ ապրենք հայերեն:

<<Քարերի երկիր Հայաստան>> /<<Հայաստան-քարաստան>>/ արտահայտությունը թևավոր կամ բանաստեղծական խոսք չէ միայն, այլ ինչ-որ չափով երկրի բնության իրական պատկերի ցուցադրումն է: Ժամանակակից հայ պոեզիայում հաճախ կարելի է հանդիպել այդ համեմատության վրա կառուցված բանաստեղծությունների: Սիլվա Կապուտիկյանը <<Ասում են՝ լինել>> շարքը բացում է <<Երգ մեր քարերի մասին>> բանաստեղծությամբ՝ հայկական

բնաշխարհին բնորոշ քարաշատությունը ժողովրդի պատմականճակատագրի գեղարվեստական բացահայտման միջոց դարձնելով:

Սև են եղել ու մութ մեր շենքերը դարեր,
Մեր վանքերը խոհուն, տաճարները համակ,
Օ, սևագույ քարեր, օ, սևավոր քարեր,
Սուգերով լի քարեր սևաքանդակ:
Ավերների միջին, արյունների միջին,
Երբ կերտել ենք համառ ու փնտրել ձև,
Դուք եք եղել թարգման մեր սևակնած սրտին,
Դուք եք եղել հարմար բախտին մեր սև:
Օ, խաչքարեր տխուր՝ շիրիմներին թաղված,
Մատուռների քարեր, քարեր վանքի
Դուք ծնկաչոք հայի աղոթքներից մաշված,
Դուք մոմերի մրից սև կրկնակի:

Մեր անցյալի պատմության մի բնորոշ կողմն է սա, որը բանաստեղծուհին ներկայացնում է մորմոքող պատկերներով / <<Դուք ծնկաչոք հայի աղոթքներից մաշված>>/, խոր ցավով, բայց ոչ երբեք խաչ քաշելով այդ պատմության վրա: <<Սև քարերի>> պատկերը կրկնելով զանազան առնչություններով /շենքերի, վանքերի, խաչքարերի, մատուռների/բացահայտում է ժողովրդի անցյալ կյանքի, նրա հոգևոր կերտվածքի էությունը.

Մինչ խորքերում հողի քարեր կային վառման,
Քարեր կային զվարթ, հազարագույն,
Մոխիրներում թաղված անթեղների նման,
Սրտերի մեջ փակվածհույսի հանգույն...

Ժողովրդի մեջ եղած ներքին այդ ուժերը, գեղեցկություններն ու հույսերը նոր հուն գտան վերածնված Հայաստանում, և բոլորովին ուրիշ դարձավ քարերի երգը, նրանց լեզուն ու պատմությունը.

Օ, ծիրանի քարեր, օ, վարդագույն քարեր,
Յասամանի քարեր, ձնծաղիկի,
Դուք խնդություն պահվածհողերի տակ դարեր,
Դուք գետնի տակ սանձած, կարոտ կյանքի,
Դուրս եք հորդել հիմա մեր դարավոր սրտից,
Ճեղքած մռայլը հին՝ ելել եք վեր,
Սյուն-սյուն շատրվանել հողի խորունկ շերտից,
Կամար-կամար շուքով ծիածանվել:
Ծաղիկների գույնի, ծաղիկների նման
Բարի ժպտում եք դուք լույսին, մարդուն:
Որ հողի տակ ուրիշ կյանք ու գույն կա այսքան,
Դարեր հուն չգտած ուրախություն:

Հայ բանաստեղծության մեջ այնքան հոլովված Արարատ լեռը Կապուտիկյանի <<Աղոթք Արարատին>> բանաստեղծության մեջ հառնում է նոր կողմերով, առկայծում է անսպասելի իմաստով ու գույներով: Նորը և անսպասելին այն է, որ Արարատի պատկերը, նրա հետ կապված ազգային և պատմական բոլոր ըմբռնումներից ու զուգահեռներից զատ ներկայանում է իբրև մարդու բարոյական կատարելության ու վեհության խորհրդանիշ: Ահա այդ բանաստեղծությունից մի հատված, որը պատկանում է ժամանակակից հայ պոեզիայի ամենախորիմաստ պատկերների թվին.

Տիպար լրումի,
Քո գիրգ գծերի գեղեցկությունը հաղորդի՛ր անձիս
ԵՎ ազնվական հանդարտությունդ
Քո այդ երկնառաք խոյացումի հետ
Ձգի՛ր գլուխս ու վե՛ր բարձրացրու

ԵՎ օրինակ տու՛ր
Տառապանքի մեջ մնալ վեհապանծ,
ԵՎ գերության մեջ տիրակալ լինել:

Հայ բանաստեղծների, նաև Կապուտիկյանի համար կռունկ, ծիծեռնակ, ծիրանի ծառ, փշատենի, բարդի, ապրիլ բառերը սոսկ թռչունների, ծառերի, ամիսների անվանումներ չեն. նրանք պարունակում են մեզ համար նվիրական, խորհրդավոր իմաստներ ու նշանակություններ: Հայի համար կռունկը գարունն ավետող թռչուն չի եղել միայն: Նա խապրիկ բերող, խապրիկ տանող թռչուն է,դարձել է խորհրդանշան, պոեզիայի մեջ զարդանկար: Իսկ ազգային զարդանկարի ստեղծագործական լավագույն օրինակներով հարուստ է Ս. Կապուտիկյանի հայերգությունը: Բանաստեղծուհին խաղողի վազի, փշատենու պայմանական պատկերների բանաստեղծական իմաստավորմամբ ժողովրդի կենսունակության, դարավոր փորձություններինդիմադրելու ուժի գաղափարն է արտահայտում:

Փշատենի՛, փոքրի՛կ ծառ,
Հայաստանի ճամփեքին
Օրորվում ես անդադար,
Օրորվում ես մեղմագին:
ՈՒ թարմ շնչում ես էլի,
Խնկում բույրերդ առատ,
Թեև հայոց դարերի
Արծաթ փոշին է վրադ...

Հայ պոեզիայի ավանդական կերպարներից է բարդին, որ Սիլվա Կապուտիկյանի <<Հայոց բարդին>> բանաստեղծության մեջ հայկական հողի ու հայ ժողովրդի հավերժական լինելու գաղափարն է արտահայտում:

Ինչքան մենակ բուսնում է նա լեռան ետև, մեն մի ձորում,
Ինչքան հեռու իր մոր աչքից,այնքան բուռն է ուժը լարում,
Այնքան ավել ճյուղը փռում, արմատները խորն է խրում,
Կյանքի հյութով ու սաղարթով այնքան թանձր է հայոց բարդին:

Ինչքան նրա դեմը փակում, խորն է ծածկում լեռը Մռավ:
Ինչքան կոծում, կողն են ծեծում շանթ ու անձրև, ամպ ու մռայլ,
Այնքան շանթին ճակատ տալիս,Կանաչում է շատ ու շռայլ,
Այնքան համառ ձգվում է վեր,այնքան բարձր է հայոց բարդին:

Ձգվում է վեր, որ բարձրանա, որ գլուխը մի կերպ հանի
Քար ու ժայռից ու երևա, ու երևա Երևանին,
Ասի՝ նայի՛ր, եղել եմ, կամ ու կլինեմ, ինչ էլ լինի,
Դու հավատա՝ լեռներից վեր, քարից կարծր է հայոց բարդին:

Բանաստեղծության մեջ իշխողը պաթոսն է, ժողովրդի պատմական առանձնահատուկ ճակատագիրն ու
Հավերժությունը հաստատող պաթոսը: Բանաստեղծության մեջ և՛ հեռվից երևալու, և՛ հայրենիքի փառքի գաղափարն է հաստատված: Այստեղ կա Երևանին, հայրենիքին տեսանելի դառնալու, դրանով իսկ հայրենիքի փառքը տարածելու գաղափարը: Ի վերջո, բանաստեղծությունը հանգում է ժողովրդի հավերժության գաղափարի հաստատմանը. <<Ասի՝ նայի՛ր, եղել եմ, կամ ու կլինեմ, ինչ էլ լինի>>: Հայոց ձգտումն է սա, մեր կարոտի կանչն է, որ դադար չունի ու արգելք չի ճանաչում: Սա մեր պատմությունն է, մեր կարոտի պատմությունը, կորստի հետ չհաշտվելու մեր էությունը: Հայոց բարդին մեր Արցախ աշխարհն է՝ ուժը լարող, շանթին ճակատ տվող, աչքն իր մորը հառած Ղարաբաղը:

Կապուտիկյանի հայրեներգության գլուխգործոցը <<Մտորումներ ճանապարհի կեսին>> փիլիսոփայական-քնարական պոեմն է:

Որտեղից ենք եկել և ուր ենք գնում. սա այն կենտրոնական գլխավոր հարցն է, որ միշտ էլ ծառացել է հայ գրողի, հայ մտավորականի առաջ և յուրաքանչյուր դարաշրջանում պատասխան պահանջել նրանից: Կապուտիկյանը այդ հարցին պատասխանում է ՝ ընտրելով մի այնպիսի նյութ, որի հետ աղերսվում են ժողովրդի ազգային լինելիության, արժանապատվության, նրա վրեժի ու հատուցման խնդիրները:

Հայ ժողովրդի հիշողությունից չի ջնջվի 1915 թվականը,մարդկության պատմության առաջին ծրագրված ցեղասպանությունը, որ իրագործեցին ջարդարար թուրքերը:

Վերջին եղեռնի դու անվերջ կսկիծ,
Այդ երբ զարթնեցիր իմ երակներում.
Վանեցի տատիս կարոտ աչքերից
Եկար-փռվեցիր դու իմ աչքերում:
Ձգվելով մեր որբ հողերից արդյոք
Ինձ փաթաթվեցիր, դու փուշ ու մացառ,
Թե Կոմիտասը—զմռսված մորմոք,
Քեզ իր հետ բերեց, երբ որ տուն դարձավ:
ԻՆՁ բաժին հանեց բեռիցն իր սուգի
Հեգ Թեքեյանը՝ հոգնած մահերգու
Թե տարուբերվող հայոց սփյուռքի
Տենդը խաթարեց խաղաղն իր հոգու:

Ինձ համար կյանքը սկիզբ էր առնում
Իմ ծնված օրից, իմ ծնված օրով,
ԵՎ ես իմացա, իմացա խռով,
Դրանից առաջ եղել աշխարհում.
Տասնհինգ թիվ է անցել աշխարհով...

Այսպես է փոխանցվում սերունդներին ժողովրդի հիշողությունը, որը չեն կարող մթագնել արգելքները, կաշկանդումները, բռնադատումները:

Հայ ժողովուրդը մոռացկոտ չէ, բայց և հիշաչար էլ չէ, և սոսկ հիշողությամբ չէ, որ ապրել էերեկ և ապրում է այսօր: Բոլոր բարբարոսներին հայ ժողովուրդը հակադրել է իր ապրելու և ստեղծելու կամքը. որքան էլ ցանկացել են բնաջնջել նրան, նա ապրել է և հենց դրանով էլ հաղթել է թշնամուն, իր վրեժն է առել:

Ո՛չ, ի՛մ ժողովուրդ, դու շատ ես տեսել՛
Դու պիտի հիշես ապրելու համար...
Դու պիտի առնես վրեժդ անհուն,
Պիտի խաղաղես հոգին քո խռով,
Բայց ոչ արյան դեմ կոչելով արյուն
ԵՎ մահի դիմաց մահ սերմանելով...

Ո՛չ, ուրիշ է քո հատուցման ուղին,
Քեզ կյանքի ուրիշ ճամփա է տրված...

ՈՒ բանաստեղծուհին գտավ մերհատուցման ուղին.
Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համառ, հազարապատիկ,
Ավերումի դեմ՝ քո ստեղծելով,
Ավեր Վանի դեմ՝ քո Երևանով,
Աքսորների դեմ՝ խուլ անապատից
Նորից տուն դարձող քո քարավանով,--

Դու պիտի ապրես՝ այսպես, սրանով...

Բանաստեղծուհին անհաշտ է և՛ անցյալ օրերի առաջ ծնրադիր երկրպագելուն, անցյալի վշտով հոգին լցնելուն, և՛ կյանքը առանց հուզումների, ժողովրդի վշտին անմասնակից ու անգիտակ անցկացնելուն: Հայրենիքը մի ամբողջություն է՝ իր հնով ու նորով, իր վշտով ու խնդությամբ,լավ ու վատով, ամեն ինչով: Բանաստեղծուհու համար հայ հայրենիքը միակն է աշխարհում, նրա ինքնությունը հաստատող ես-ը անփոխարինելի է, անփոխարինելի ամեն ինչով: Հենց այդ պատճառով էլ բանաստեղծուհու հայրեներգությունը հնչում է նաև ուրիշ լեզուներով, գրավում ու հայրենասիրական զգացումներով է լցնում նաև այլազգի ընթերցողներին:

Թող որ օրերս իմ ճամփակեսին
Ծանրանան այսպես խոհով ու խոկով,
Թող որ ալիքվի իմ ողորկ հոգին
Քո անցյալ ցավով, քո դժվար բախտով,
ՈՒ վարդագույնին քո երևանյան
Մերթ ստվեր ընկնի քո Արարատից,
Արև օրերիս անձրև կաթկթի,
Ծիածանիս մեջ ամպերը մնան,--
Դու աներջանիկ, բայց մեծ սիրո պես
Հոգուս պարապը ափեափ լցնող,
Դու ուրախ ժամիս մորմոք մշտակեզ,
Դու տխուր ժամիս բերկրանք մշտաշող,
Ինձ հարստացնող, ինձ ազնվացնող
ԵՎ ինձ հաստատող դու միակ իմ <<ես>>,--
Եթե լցված եմ, լցված եմ քեզնով:

ՈՒ չեմ հավատում՝ այս երկնքի տակ
Քո հին երակին չկա սպառում,--
Ես՝ բարակ մի թել հյուսվածքում քո տաք,
Եթե ապրում եմ, քեզնով եմ ապրում...
Քեզնով եմ ապրում.
ԵՎ ես՝ բանաստեղծս,
Օրհնում եմ բախտս հետին այս երգով,
Որ աշխարհիմեջ՝ երկնքի ներքո,
Աշխարհը թողած՝ ծնվել եմ այստեղ—
ՈՒ որդին եմ քո...

Սիլվա Կապուտիկյանի պոեզիայում հայրենասիրությունը գործնական տեսքով է հանդես գալիս: Բանաստեղծուհու համար հայրենասիրությունը գեղեցիկ ուհեռավոր երազ չէ: Սերը ժողովրդի նկատմամբ գործով է ստուգվում: Մտածել ժողովրդի կարիքների ու հոգսերի, ճակատագրի մասին, ճշմարիտ ուղի գտնել. սա է իսկական ժողովրդայնության, հայրենասիրության ցուցանիշը: Բանաստեղծուհին հայրենի լեռները, բնությունը տեսնում է իր ժողովրդի սրտի ու մտքի աչքերով, զանազանում է կորցրածն ու գտածը և շատ բան ուզելով հանդերձ՝ չի կորցնում երբեք զգաստ ու սթափ հայացքը: Նա մեր ժողովրդի, հայ մարդու կյանքի իմաստը տեսնում է ոչ հին հուշերին հանձնվելու, հին ցավերով հոգին լցնելու մեջ.

Իմ հա՛յ ժողովուրդ, ի՛մ մեծամայր,
Ես սիրում եմ քեզ, ի՛մ կենսատու,
Բայց ոչ թե սիրով թշվառ որդու...

Կապուտիկյանի համար հայրենիքը թանկ է ամենից առաջ իբրև իր ժողովրդիհարատևող գոյության խորհրդանիշ: Բանաստեղծուհին սարսափում է այն մտքից, որ կարող էր հանկարծ այս էլ չլինել.

Իմ Հայաստանը,
ԵՎ ինչպես որ
Ավելի խորն ես սիրում մեկին,
ՈՒՄ ինքդ ես փրկել մահվան ձեռքից,
Այդպես էլ մենք ենք սիրում այսօր
Մեր Հայաստանը...

Եվ մահվան ձեռքից մազապուրծ եղածն ավելի թանկ է, ու նրա վրա ավելի ես դողդողում: Ցրտահարված այգին ավելի է խնամք պահանջում, վիրավոր մարմինը՝ նույնպես: Վերքից մնացած սպին անհանգստացնում է, ուր մնաց ոտքից գրկվելը: Ոտքից գրկվածը վստահելի հենարան է փնտրում: Եվ բանաստեղծուհին ուրախ է, որ իր ժողովուրդը գտել է այդ հեներանը՝ վերածնված Հայաստանը: Բանաստեղծուհու համար Երևանը մեծ կառուցումներով ապրող մայրաքաղաք չէ, Մատենադարանը գրքերի ապաստարան չէ, և ոչ էլ Մասիսը հողից, քարից ու ավազից կազմված լեռ: Նրանք բոլորը ապրելու, հարատևելու , ստեղծելու ու վերաշինելու ոգի են ու խորհուրդ:

ՈՒշագրավ է բանաստեղծուհու <<Ձմեռ է գալիս>> ժողովածուն, որը դարձյալ հայրենասիրական , խոհական և սիրային քնարերգություն է: Իր նոր բանաստեղծությունները հեղինակը նմանեցնում է ուշ աշնան խաղողի՝ <<խիտ ու խոր>>: Այդպես էլ կա՝ սեղմ, տարողունակ, լի, իմաստավոր:

Այդ փոքրացած չափերը համապատասխանում են հայրենիքի չափերին.

ՈՒնեցած հացդ նշխարի չափ է,
ՈՒնեցած հողդ խաչքարի չափ է,
Իսկ տառապանքդ,
Իսկ անչոր վառքդ,
Ափեափ զարկող վիրավորանքդ
Ծովի,
Օվկիանի,
Աշխարհի չափ է:

Փոքր երկիր՝ մեծ տառապանքով: Իրական հայրենիք և ոգու հայրենիք ըմբռնումները նոր կերպարանք են տալիս այն ամենին, ինչ կոչվում է հոգևոր Հայաստան: Արթնանում են ժողովրդական մոտիվներ, որոնք տարուբերում են հայրենիքի հինավուրց ցավը: Դա մեկ <<Լուր-դա-լուր>> է, մեկ՝ <<Քելե՛, լաո՛>>:

Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ ունկերում,
Ձայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից,
ՈՒ ծխի մեջ կսկծում է մի ծերուկ.
<<Քելե՛, լաո;, քելե՛ էրթանք մըր էրգիր>>:

Աչքերի մեջ համառ մի ուխտ ու հարցում,
ՈՒ մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին:
Հարցնում է իրեն , բախտին, Աստծուն.
<<Իմալ կեղնի, իմալ չերթանք մըր էրգիր>>:

Կարոտից այրվող մի բանաստեղծություն է սա, որտեղ հայ ոգու կարոտն արթուն է, արթուն է մեր լեռնաշխարհի խլված կեսի, մեր սրբազան հիշատակների ու մասունքների կարոտը: ԵՎ այդ կարոտի ուժգնությունն է, որ բանաստեղծուհուն իրավունք է տալիս ասելու.

Սեղմի՛ր ատամդ, դու ամենքի մոտ
Բացեիբաց լալու իրավունք չունես,
Թեկուզ վիրավոր, թեկուզ արնաքամ
Ձենքերդ տալու իրավունք չունես:
Դու, հա՛յ բանաստեղծ, ինչ էլ որ լինի,

Վերջին զինվորն էլ ընկնի հուսահատ,
Քո ժողովրդի հավերժությանը
Չհավատալու իրավունք րունես:

Խոսելով Կապուտիկյանի պոեզիայի մասին՝ Պաչույր Սևակը գրել է. <<Բանաստեղծուհու հոգին թաթախված է կանացի քնքշությամբ, իսկ սիրտը տրոփելու է առնական ուժգնությամբ, ու նրա ձայնը հնչելու է կանացի գորովագին մեղմությամբ և տղամարդկային հուժկու շեշտերով, նրա խոսքը կունենա մայրական բարեգութ ելևէջ և հայրական ազդու խրոխտություն, նա պիտի լաց լինի որպես կին և ոգեկոչի որպես այր կորովի, նրա հոգևոր կյանքը զարդարվելու է հայուհու ավանդական պարկեշտությամբ և անհանգիստ փնտրումներով:

Այո՛, կին գրող է նա իր փխրուն խոսքով, բայց ամենատղամարդ բանաստեղծն է ժամանակակից հայ գրականության մեջ, որովհետև ինչքան նուրբ է ու կանացի, նույնքան առնական ու կորովի է նրա պոեզիան: Կապուտիկյանը եկավ իրենով լցնելու հայ գրականության այն պարապը, որ առաջացել էր կանացի ջերմ խոսքի պակասից: Եկավ և լցրեց այդ դատարկը: Նա ժառանգորդն է հայ կանանց ոչ-թե տառի, այլ ոգու: Ծուշանիկ Վարդենու և հայոց թագուհի Փառանձեմի, Այծեմնիկի և այն երկու հայ կանանց զարմից է, ովքեր Մշո Ճառընտիրը 1915-ի կոտորածներից փրկեցին՝ աշխարհում ամեն ինչ մոռացած: Նրանց խրոխտությունը, ոգու կորովը, հայրենասիրությունն ու քնքշությունն է ժառանգել հայ տղամարդ գրողների գրչի թափն ու զորությունն էլ դրան գումարած: Նա հայոց Ծովինարի սերն ունի հայրենիքի հանդեպ, իր հողը սիրում է հեթանոսական սիրով.

Հայոց աշխարհ, հայոց երկիր, հայոց հող,
Ուր էլ թռչեմ, ինչ աշխարհ էլ թափառեմ,
Նորից ետ գամ, քո տանիքում ծվարեմ:

Օտար քաղաքների շուքն ու հարստությունը չտարան, իրենց ափին չկապեցին մեր բանաստեղծին, որովհետև հայ շեների ու քաղաքների շողն ու շամանդաղը նրա համար օտար փայլ ու շուքից ավելի թանկ էին, ավելի սիրելի: Փարիզի նման մի քաղաքում նա, շնչահեղձ լինելով, աղոթքի պես շշնջացել է.

Ես գնամ, շուտ գնամ,
Ծուտ հասնեմ Արարատ իմ լեռին,
Կառչեմ իմ ժայռերին ու մնամ,
Ծունր իջնեմ տապանոտ իմ հողին:

Այսպես է սիրում նա իր հողն ու երկիրը:

«Հայ ժողովուրդը իր դարերու պատմության մեջ մատի վրա է, որ կհամրե իր տաղանդավոր, մեսրոպյան լեզվով գրող բանաստեղծուհիները, որոնց լեռան գագաթին կանգնած եք Դուք Ձեր պոեզիան իր հուզական խորությամբ և համամարդկային հայրենասիրական ոգիով տոգորված և իր վեհ թռիչքով ծովաշունչ ու արծվաթռիչք, որը հմայք և կախարդանք կստեղծե անոր երկրպագու ընթերցողներու մեջ

Դուք նոր համամարդկային բովանդակությամբ հայրենասիրության գործնական նմուշ մըն եք և ձեր հայրենասիրության շռայլությունը ոչ մեկ ժամանակ և ոչ մեկ տեղ և ոչ մեկե պիտի չքննադատվի, այլ հիացմունքով ու հմայքով պիտի փնտրվի ու պիտի գնահատվի»:

Հովհաննես Պարսկունի

Վստահ կարելի է ասել՝ կա և լինելու է Սիլվա Կապուտիկյան բացառիկ երևույթը մեր կյանքում: Ու եթե ցավում ենք, որ նա մեզանում միակն է, ապա նույնքան երջանիկ ենք, որ կենարար սննդի պես ներծծված է բոլորիս բջիջներում՝ ամեն օր ու ամեն ժամ արթնացնելով թմբերից ու տանելով դեպի բարձունքներ: Հայ ընտանիքներում ծնվել ու ծնվում են այն մանուկները, որոնք կրողն են լինելու բանաստեղծի հարստության՝ գիտակցելով, որ ժամանակի շնչով իրենց է անցնում

դարերով ամբարած ու միշտ կենսունակ ոգեղեն այս հարստությունը աննկատ տեր դարձնում Սիլվա Կապուտիկյանի հարատևող ու ժառանգությանը:

Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի մշտական ուղեկիցն է՝ իր բերդ-հայությամբ, բանաստեղծության և հույզի իր ցասումով՝ հանուն հայրենիքի և արդարության:

Օգտագործված գրականության ցանկ

Վ. Տերյան՝ <<Երկերի ժողովածու>>, հատոր 2-րդ, 1962թ., Հայպետհրատ

Ս. Կապուտիկյան՝ <<Քարավանները դեռ քայլում են>>, 1964թ., <<Հայաստան>> հրատ.

<<Մաշտոց>> կրթամշակութային հանդես, 2005թ., հ. 9

<<նոր դար>> հանդես, 1998թ., հ. 3

Ս. Կապուտիկյան՝ <<Երկերի ժողովածու>>, 1984թ.

<<Գրական թերթ>>, 1979թ., հ. 4